



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌԵԽԻ. ԻԷ. ՏԱՐԻ. ՀԱՄԱՐ ԵՐԲՈՐԳ. ՄԱՐՏ 1894 թ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՏԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Հարունակութիւն *).



ՊԱՏԿԸ ԼՈՒԹԵԼ ԿԱՐԵԼԻ՛ Է ԸՍՏ ԲԵՐԻՍՏՈՒ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԼՆ՝



ըզէն մինչև այժմ բոլոր ա-
ստածներից կարող ենք և ու-
րիշ հարցերի համար հետևու-
թիւններ անել սակայն նախ
ուշադրութեան առնենք Քրիստոսի վարդա-
պետութիւնը: Քաղենք այդ խնդրին վերաբե-

րեալ վկայութիւնները. Մատթէոս աւետա-
րանիչը զրումէ, ամուսիններն ոչ են երկու-
այլ՝ մի մարմին, արդ զոր Աստուած զուգեաց՝
մարդ մի՝ մեկնեացէ: (ԺԹ, 6):

Ղուկ. ԺԶ, 18. կարգում ենք. «Ամենայն
որ արձակէ զկին իւր՝ և առնէ այլ, շնայ. և
որ զարձակեալն առնէ, շնայ»:

Նոյնը պատմում է և Մարկոս Ժ, 11. «Եթէ
այլ արձակեացէ զկին իւր և արացէ այլ,
շնայ: Եւ կին, թէ ելցէ յառնէ իւրմէ և ե-
ղիցի առն այլում շնայ: Ուստի և զոր Աս-
տուած զուգեաց, մարդ մի՝ մեկնեացէ»:

Պօղոս առաքեալն էլ ասում է՝

«Կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ
կայ օրինօք. իսկ եթէ մեռցի այրն, արձակեալ է
յօրինաց առն: Ապա ուրեմն մինչ կենդանի է
այրն, շուն կոչի, եթէ լինիցի առն այլում...»:

* Տես. Նախընթաց համար:

Դարձեալ:

«Կնոջ յառնէ մի՛ մեկնել. ապա եթէ մեկնեցի, անայր մնացէ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեցի, և առն զկին իւր մի՛ թողուր:»¹

Այս բոլոր վկայութիւններէց պարզապէս երևում է, որ Քրիստոսի հրամանն է՝ «զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեցէ»: Սակայն բերուած վկայութիւններէց զատ կայ մի այլ վկայութիւն ևս, որ չյիշեցինք: Այդ կարգում ենք ըստ Մատթէոսի աւետարանի մէջ, որ է այս.

«Ապաքին ասացաւ. թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն. բայց ես ասեմ՝ ձեզ, թէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շրնալ և որ զարձակեալն առնէ՝ շնայ:»² Եւ դարձեալ.

«Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա, և ասէին թէ արժան իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն վնասու: Պատասխանի ետ նոցա և ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր թէ որ հաստատեացն ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա, և ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու, այլ մի մարմին. արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեցէ: Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և արձակելոյ: Ասէ ցնոսա. Մովսէս վասն խնայողութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղև այնպէս: Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակեցէ զկին իւր, և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ: Ասեն ցնա աշակերտքն իւր, թէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ: Եւ նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է» (Մի. 3—11):

Որպէս զի լաւ հասկանանք այս երկու պարբերութիւններն և ուղիղ եղբակացութեան գանք, պէտք է պարզենք երեք խնդիրներ, նախ թէ ի՞նչ վիճակի մէջ էր արձակման տեսութիւնը Հրէից մէջ, երկրորդ՝ թէ ի՞նչ է այդ պարբերութիւնների իմաստն ըստ բուն լրնագրին. և երրորդ՝ թէ ինչպէս են մեկնում մեր նախնիք:

... Բ. Որինաց մէջ (Ու. 1—4) հրամայուած է, որ եթէ ամուսինը գտնէր իւր կնոջ մէջ «իրս անարգութեան», կարող էր արձակել նորան և արձակման թուղթ տալ և կինն այդ արձակման թղթով՝¹ կարող էր գնալ ուրիշ մարդու, իսկ եթէ վերջինս մեռնէր, այդ կինը չէր կարող վերստին առաջին մարդուն գնալ՝ իբրեւ պղծուած: Եթէ ամուսնացողը խաբէր՝ թէ իւր կինը կորցրել է իւր կուսութիւնը նախ քան պսակուիլն և ապացուցեն նորա ստութիւնն, ինքը պէտքէ պատժուէր, իսկ եթէ ճիշդ լինէր, քարկոծ պէտք է լինէր կինն իւր պղծութեան համար (Ու. 13—21). վերջապէս տուգանքի էր ենթարկուած և բռնաբարուած աղջկայ հետ պսակուած՝ նա՝ որ լլկում էր կոյս աղջկան:

Թէպէտեւ արձակումը շատ կամայական էր դառնում, որովհետեւ մինչև անգամ անձնական ուխտադրութիւնը կարող էր պատճառ դրուել արձակման², սակայն միւս կողմից պարզապէս յայանուած է, որ Աստուած չէ սիրում արձակումը. «Չզուշացարուք յոգիս ձեր, և զկին մանկութեան քոյ մի՛ թողուր, բայց եթէ առ ասել արձակեցես, ասէ Տէր Աստուած Խրայէլի, ծածկեցէ ամբարշտութիւն զխորհուրդս քո, ասէ Տէր Ամենակալ զգոյշ լերուք յոգիս ձեր և մի թողուցուք:»³

Բայց և՛ օրէնքի մէջ «իր անարգութեան» անորոշ խօսք է, ուստի և միշտ վիճարանութեան առարկայ էր, թէ ինչ պէտքէ դորա տակ հասկանալ: Քրիստոսի ժամանակ Համմայի դպրոցը պնդում էր թէ դորա նշանա-

¹ Կորնթ. Է. 11.

² Ե. 31, 32.

¹ Երեմ. Գ. 8. եւ. Ծ. 1.

² Թիւ. Լ. 10.

³ Մադաբիա. Բ. 16.

կուժիւնն է շնութիւն և բարոյական աղտ, մինչդեռ Հիլլելի դպրոցն ասում էր՝ որ դորա մէջ հասկացում է ամենայն ինչ, որ մարդուն դիւր չէ դալիս: Այս վերջինս է՝ որ ասուած է փարիսեցիների կողմից չլատ ամենայն վնասուած: Այսինքն հարցնում էին թէ կարելի է արձակել՝ եթէ պատճառը տղամարդի նկատած մի որ և իցէ վնասակար կամ տհաճելի բան լինի: Այս հիմունքով արձակումը դառնում էր մի սովորական ինչ և կինը խաղաղիք էր լինում տղամարդի ձեռքին, վասն զի եթէ մի ուրիշ կին դիւր դար ամուսնունս այդ էլ պատճառ կլինէր արձակման: Պորա դէմ է, որ Քրիստոս ասում է. «ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում: Եթէ ան քո դայթակեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ ի քէն...»¹ Հարկաւ՝ հարցը տուել էին, որպէս զի Քրիստոս պատասխանէր ի նպատակ մէկ կամ միւս դպրոցին: որով և դայթակցութեան պատճառ լինէր մի կողմին: Ընդ սմին արձակման օրէնքն որքան էլ անորոշ լինէր, յայտնի է սակայն, որ շնութեան պատճառով կնոջ քարկոծում էին շնացողի հետ², մինչև անգամ այրման դէպք էլ է յիշում³: Փարիսեցիներն այսպիսի հանգամանքների մէջ էին առաջարկում Քրիստոսին իւրեանց հարցը:

Բ. Քրիստոս համարում է հին օրէնքի արձակման թոյլտուութիւնը Հրէից խտասրտութեան հետեանք: Մարկոսի և Ղուկասու պատմութեան համաձայն՝ Քրիստոս շնութիւն է անուանում արձակողի և արձակողի նոր ամուսնութիւնը. նա շեշտում է՝ «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: Սօսքի ընթացքը նաև առաջին աւետարանի մէջ ցոյց է տալիս, որ Քրիստոս բացէ իրաց մերժում է և արգելում է կին արձակել. նոյնը հաստատում է և Մարկոսի պատմածով: Նոյնը պնդում է և Պօղոս առաքեալն, ինչպէս տե-

սանք, այնպէս որ Քրիստոսի խօսքերի եզրահացութիւնը մի և նոյնն է բոլոր դրքերի մէջ:

Արդ՝ եթէ այդ այդպէս է, ինչպէ՞ս պէտքէ հասկանանք Քրիստոսի այն խօսքն, թէ «որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան» (կամ՝ և ոչ վասն պոռնկութեան՝ և առնիցէ այլ շնայ). նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ:

Ուշադրութեան առնելով զըջագիր օրինակները, տեսնում ենք որ հայոց թարգմանութիւնն այս կէտում հարազատութեամբ չէ հասել մինչև մեզ. միմիայն այս երկտողում տարբերութիւնները շատ բազմաթիւ են: Պորը չաղրներից ոմանք ունին «արձակեսցէ», «առնիցէ», սակայն նշանաւոր է այս, որ երկու երկաթագիր օրինակներ Ա. 362 և Ա. 364 ունին Մատթ. ԺԹ, 9 «և ոչ վասն քան պոռնկութեան»: Պոցանից առաջինը զրուած է 1057 թուին, իսկ նոր զըջաղրների մէջ էլ կան դոցա համաձայն օրինակներ, որպէս Ա. 173 և 165:

Գիմելով յունական բնագիրներին, գտնում ենք որ Սինայեան, Եփրեմեան Պաւլինեան և Ռուսսանեան երկաթագիր հին օրինակներն ունին «մէ էպի պոռնէյա», իսկ երկու նոր երկաթագիրներ ունին «պարեկտոս լոգու պոռնէյա», այս վերջինների հետ և մի քանի ուրիշները կրկնում են ԺԹ, զիսում ևս «տայ նմա շնալ» փոխանակ «և առնիցէ այլ՝ շնայ»:

Արդ՝ «մէ էպի պոռնէյա» թարգմանուած է «և ոչ վասն պոռնկութեան», իսկ «պարեկտոս լոգու պոռնէյա» — «առանց բանի պոռնկութեան»: Գիտնականներից ոմանք, ինչպէս օրինակ պրօֆ. դոքտոր Վատտերիս, թարգմանում է ԺԹ, զիսում «իցէ իսկ վասն պոռնկութեան» մինչդեռ Ե. զիսում «չինէր իսկ ի պատճառս պոռնկութեան»: Առաջինն այդպէս է թարգմանում և բողոքական պրօֆեսոր Վայցգեկկեր, իսկ երկրորդը թարգմանում է. «ամենայն որ արձակէ զկին իւր, ի բաց առեալ զդէպն պոռնկութեան, նա տայ նմա շնալ... Եւ իրաւ եթէ տղամարդը թողնէ իւր պոռնիկ կնոջ, նա առիթ չէ լինում նորա շնութեան,

1. Մատթ. Ե, 28, 29.

2. Դևա. Ի, 10. Բ. Օր. ԻԲ, 22, Եզեկ, ԺԶ, 38, 40. ԻԳ, 43.

3. Ծննդ. ԼԷ, 24.

քանի որ արդէն չեղուած է կինը: Սակայն «և որ զարձակեալն առնու՝ շնայ» ուրեմն արձակուածներին արգելում է կրկին ամուսնանալ: Իսկ երկրորդ վկայութիւնն է. «ամենայն որ արձակեաց, զկին իւր իցէ իսկ վասն պոռնկութեան և առնիցէ այլ՝ շնայ և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ» հետեւաբար մինչև անգամ պոռնկութեան համար արձակել կնոջ և ուրիշի հետ պսակուելը շնութիւնն է. ըստ այսմ արգելում է արձակել կնոջը:

Այսպիսով բուն բնագիրն ոչ մի տարակուսանքի տեղիք չէ թողնում և վերջնականապէս արգելում է կնոջ արձակումը:

Այժմ տեսնենք թէ ի՞նչպէս կարելի է հասկանալ մեր թարգմանութիւնն ինչպէս որ կայ: Տեսանք արդէն որ երկու տեսութիւններ կային Հրէաների մէջ. մէկն այն էր թէ կարելի է կնոջն արձակել ամենայն տհաճելի դէպքի պատճառով. իսկ միւսը թէ արձակումը միայն պոռնկութեան համար պէտք է լինի: Եթէ Քրիստոս դոցանից մէկին ի նպաստ պատասխանէր: Փարիսեցիներն արդէն հառած կլինէին իւրեանց նպատակին: Սակայն նկատեցինք վերեւում որ նոյն իսկ Հին Աստուածութեան Աստուծոյ առաջ մի տհաճելի բան է արձակումը, թէև Մովսիսական օրէնքով այդ թոյլատրւում էր: Գիտենք և այս որ շնութիւնն ամենամեծ չարագործութիւնն էր համարւում և ամենամեծ պատժի արժանանում: Իսկ տասնաբանեայ պատուիրանների մէջ շնութիւնը գրուած է «մի սպանաներ—մի զոգանար»-ի մէջտեղը:

Քրիստոսին յայտնի էր այս բոլորն և նա սկզբից իսկ պատասխանում է. «զոր Աստուած պահեաց՝ մարդ մի՝ մեկնեցէ»: Փարիսեցիները Հասան իւրեանց վերոյիշեալ նպատակին, վերստին հարց առաջարկեցին յուսալով թէ Քրիստոս քանի որ երկու ուղղութիւններն էլ մերժեց, ստիպուած հին օրէնքի դէմ կկռուէր և կզրգուէր ժողովուրդը: Երբ ասացին. «Իսկ Մովսէս ընդէր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և արձակելոյ»: «Վասն խտաւրութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձա-

կել զկանայս ձեր ասում է Քրիստոս այլ ի սկզբանէ ոչ եղև այնպէս: Ըստ որում Մովսէսի հրամայածը միայն որոշ հանգամանքների մէջ յառաջացած բացառութիւն էր: Մինչդեռ Քրիստոս այդ այլ ևս չէ ընդունում: Եւ վերականգնում է Աստուծոյ պատուիրանն ասելով վերստին. «ամենայն որ արձակեաց, զկին իւր՝ և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ...»: Ուրեմն Քրիստոս շնացող է անուանում կինը թողող և ուրիշի հետ պսակուողին, այլ և շեշտում է վերջում «և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ» այսինքն ոչ թէ ամենայն պատճառով (ըստ ամենայն վրնասու) կարելի է արձակել այլ միմիայն պոռնկութեան համար: սակայն երկրորդ ամուսնութիւնը երկուսի կենդանութեան ժամանակ՝ շնութիւնն է: Եւ որովհետև շնութիւնը շատ մեծ մեղք է, ուստի բաժնուողները չեն կարող վերստին ամուսնանալ:

Մի և նոյնն է ասուած և Ե. գլխում թէ արձակել նշանակում է շնութեան պատճառ լինել իսկ վերջի խօսքերը թէ «որ զարձակեալն առնէ՝ շնայ» վերջնականապէս արգելում է արձակուածի կրկին ամուսնութիւնը, մանաւանդ որ ասել է արդէն թէ «Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում»: Գորա հետ միայն վճռւում է որ արձակումը կարող է միմիայն մի ծայրայեղ դէպքում յառաջանալ՝ այն է՝ կնոջ անբարոյականութիւնից: Սակայն այդ էին ասում և Հրէից ուղղաբառ օրէնագետները, մինչդեռ Քրիստոս ուղղում է վերացնել այդ ներդաւանութիւնն²,

1. Ամա՛ այլապէս ասած. «Ամենայն որ արձակեցէ զկին իւր, որ չէ արժան՝ բայց եթէ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ»:

2. Պէտքէ լաւ ուշադրութիւն դարձնել խօսքերի ձևի վրայ. «Լուարդք զի ասացաւ առաջնոցն թէ Մի սպանաներ, զի որ սպանանէ՝ պարտական լիցի դատաստանի: Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբոր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի...»:

Ապաքէն ասացաւ, եթէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն. բայց ես ասեմ ձեզ, եթէ

որ արեւելին նոցա «խտաւարտութեան» պատ-
ճառով: Ուստի և շեշտում է՝ «և որ զարձա-
կեալն առնէ՝ շնայ»: Այդ վտանգներով վրձ-
նապէս արգելում է արձակումը, ցոյց տալով
աջ և ձախ այն վիճերն, որոնց մէջ կարող է
ընկնել կին արձակողը:

Անբարոյականութեան պատճառով արձակո-
ղը պէտք է հարկաւ հետեւի Քրիստոսի նախըն-
թաց խօսքին. «եթէ աջ ձեռն քո զայլթակը-
ղեցուցանէ զքեզ, հոտ զնա և ընկեա՛ ի քէն»
զի՛ լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ,
և մի՛ ամենայն ժարմինդ քո արկանիցի ի գե-
հեն»: Հասկանալի է, որ արձակողը պէտք է
անկին ֆնայ՝ իբրեւ հատանող իւր մարմնի մի
մասի: Այդ է որ շեշտուած է նաեւ Պօղոս
առաքեալի թղթի մէջ. «ապա եթէ մեկնեացի,
անայր ֆնացէ կամ անդրէն ընդ առն իւ-
րում հաշտեցի»: Եւ կամ «մինչ կենդանի է
այրն, շուն կոչի, եթէ լինիցի առն այլում...»
Ուստի և Մարկոս աւետարանիչը ամփոփ և
ուղղակի պատմում է Քրիստոսի պատասխանը.
«Եթէ այլ արձակեացէ զկին իւր և արացէ
այլ, շնայ: Եւ կին, եթէ ելցէ, յառնէ իւրմէ
և եղիցի առն այլում, շնայ»:

Գ. Այժմ զիմեք նախնեաց մեկնութիւն-
ներին և տեսնե՛ք թէ այդ ինչպէս էին հաս-
կանում մեր ս. հայրերը:

Անանիայ Մանահեցին ասում է Մատթէի
դեղեցիկ մեկնութեան մէջ.

«Լուր զինչ ասէ. Մովսէս վտան խտաւար-
տութեան ձերոյ հրամայեաց զայն, զի մի՛ ան-
դէն ի տան մահս զործիցէք, այլ ի բաց հան-
ջիք. և զի ոչ միայն զսպանութիւնն, այլ և
զցատումն կարճէ, յայն սակս և զայսպիսի օ-
րէնս դնէ. և վասն այնորիկ ստեպ զառաջին
բանս օրինացն յիշէ, զի ցուցցէ թէ ոչ հա-
կառակ ինչ, այլ յոյժ միաբան նոցին է, զի
ոչ լուծանէ, այլ առաւել յուղղութիւն ա-

ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռն-
կութեան՝ նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն
առնէ՝ շնայ. Գարձեալ լուսաբոյբ զի ասացաւ առաջ-
նոցն. Մի երգնուցուս սուտ... Այլ ևս ասեմ ձեզ,
Ամենին մի երգնուր...»:

Ճէ. և միշտ ընդ արս խօսի. «որ արձակէ,
ասէ, զկին իւր» թէպէտ և այլ ոչ առնէ,
այնու իսկ արար դանձն պարտական, զի շնալ
եւ կնոջ ի հանելու և միւսն զայլոյ հանեալն
առնով և զև շնացող: Եւ զի մի ամենեւին ի
կնահանն ձգիցէ, զֆնասն և ճոխանալով պատ-
ճառս տացէ կնոջն և այնմ որ առնուլն կա-
միցի զկինն, փակեաց զդուրս առ ի նմանէ,
զի ասելովն թէ, «որ զարձակեալն առնէ՝ շնայ»
և կամիցի իսկ՝ զկինն ածէ ի զգաստութիւն,
և յամենեցունց խնու զճանապարհս նորա և
զի ուսցի թէ, «ամենայն հարկաւորութեամբ
այնմ որ սկզբանէ բաժին տուաւ նմա՝ պարտ
է նստել. և եթէ յայնմանէ վրիպեցոցի, յայլ-
մէ ումեքէ պատտաւոր մի դացէ. զի ի հարկէ
այնուհետեւն եղիցի՝ յանձն առնուլ իւրում
ամուսնոյն հսկել: Ապա թէ ծանրագոյն ինչ
զայս համարեալիւր, յիշեալիւր զառաջին բան-
սըն, որովք երանէ զլսողսն, և տեսչիւր զի յոյժ
զիւրին է և հնարաւոր, զի հեղն և խաղա-
ղարարն և խոնարհս սրտիւ և ողորմածն զխաղ-
ի հաշտութիւն ածիցէ. զիսորք իցէ, զի ինքն
ընդ իւրում կնոջն կաղիցի. և ոչ այսու միայն,
այլ և այլով ևս օրինակաւ ցուցանէ զօրէնս
թեթեւագոյնս: Եւ յայտ առնէ զպատճառս
արձակելոյն և չարձակելոյն՝ ասելովն թէ՝ «ա-
ռանց բանի պոռնկութեան» ապա թէ ոչ ի
նոյն իսկ դառնալոց էր. զի թէ հրամայեալ էր՝
թէպէտ ընդ բազումն լինիցի, սակայն ունիցի
ի տան և ոչ հանիցէ, այնպիսի իշխանութիւ-
նըն կործանէր զիրսն: Տեսանե՛ս զիսորդ միա-
բանին յետին բանքն ընդ առաջինսն. զի որ
ոչն հայիցի յարատ ի կին ընկերին, յայտ է
թէ, ոչ պոռնկի. իսկ որ ոչն պոռնկի, ոչ տոյ
պատճառս այլում առն հանել զիւր կինն:
Աման այնորիկ մեծաւ զգուշութեամբ պարս-
պեալ պնդէ բազում երկիւղիւ ածել ի ձգու-
նըս զայրն՝ եթէ հանել կամիցի, եթէ պոռնկու-
թեան կնոջն ինքն լիցի պատժապարտ. զի մի՛
յորժամ լսիցես թէ խլեա՛ և ընկեա՛ ի բաց
զակն քո, զկնոջէն կարծիցես, թէ վասն դոյ-
զըն ինչ իրաց պարտ իցէ արձակել, յարէ ի
նոյն ի դէպ ժամանակի և զառաջագոյն նորին

ուղղութիւնն) զի միով իրօք հրամայէ հանել
և միւսովն չհրամայէ»¹:

Յովհանն Ծործորեցին ասում է նոյն աւետա-
րանի մեկնութեան մէջ, որ շարունակութիւն
է ս. Մ. Շնորհալու մեկնութեան:

«Այլն թէպէտ այլ կին ոչ առնուցու-
սակայն պատժապարտ է, զի շնալ ետ կնոջն
ի հանելն: Իսկ թէ այլ ոք առնէ զհանեալ
կինն՝ զանձն անվտանգ կարծեցեալ, և զնա
շնացող անուանէ, զի ոչ նորա է կինն՝ այլ որ
եհանն»:

«Իսկ ասելովն թէ «առանց բանի պոռնկու-
թեան», յայտ առնէ զպատճառ արձակելոյն
և շարձակելոյն, զի թէ այս ոչ գուցէ ի միջի՝
անհնարին է տալ արձակումն: Իսկ թէ լինի-
ցի վկայութեամբ՝ արձակել արժան է. ընդէր,
Նախ՝ զի ինքն զինքն ի սիրոյ առն իւրոյ բա-
ժանեաց, և գործով հոմանիս իւր զուգեաց,
վասնորոյ և բանիւ ևս բաժանել ի դէպ է, զի
մի՝ որդիքն շնութեան զհայրենիս հարազատ
որդւոցն ժառանգեացեն:

«Եւ երկրորդ՝ զի մի՝ նախանձեալ առն՝
վրէժս առնէ ի կնոջն և ի սիրելիսն, զի «բու-
ռըն է նախանձ առնակնոջ, և ոչ հանգուրժէ
յաւուր բարկութեան»՝ ասաց իմաստունն: Տես
և զայս՝ թէ որպէս միաբանի այս ընդ առաջ-
նոյն, զի որ ոչ հայի յարատ՝ ոչ շնայ, և որ
ոչ շնայ՝ ոչ արձակէ զկին իւր լինել առն այ-
լում և թէ արձակէ՝ ոչ հրամայէ այլում
լինել որչափ կենդանի է կինն, որպէս հրամա-
յէ առաքեալ»²:

Իսկ ըսն Բարսեղը գրում է Մարկոսի մեկ-
նութեան մէջ. «Զի այրն յորժամ լսէր՝ թէ
պատճառ պոռնկութեան կնոջն ինքն է, զգու-
շանայր հանել, և նա որ կամէր առնուլ՝ յոր-
ժամ գիտէր թէ պոռնկութիւն համարեալ է
իւր՝ ոչ առնոյր: Այլ և ինքն կինն յակա-
մայ լսէր ի լրբութենէ, յորժամ գիտէր թէ
ոչ ոք ընդունելոց է զնա»³:

Ահա և Իգնատիոս վարդապետը, Ղուկա-

սու՝ մեկնութեան մէջ. «Պատուէ, դարձեալ և
այնու զօրէնս, զի որ նովաւ կապեցան մար-
մինք՝ որոշումն արաքոյ բնութեան շունս
գործէ՝ յորմէ բաժանեցաւ. և առ որում բնա-
կեաց»:

Իսկ ս. Գրիգոր Տաթևացին աւելի ևս կարճ
և որոշ բացատրում է ասելով. «Զորք գէմքն
շունս կոչէ, այրն որ արձակեաց, և կինն, որ
արձակեցաւ, և կինն որ էառ, և այրն որ զար-
ձակեալն առնուլ՝ շունք եղեն, և դատաստան
շնացողացն է նոցա...: Վասն այնորիկ հրա-
մայեաց Քրիստոս, ամենեւին ոչ բաժանել զկին
յառնէ իւրմէ»:

Դարձեալ.

«Մարդն որ եհան զկինն, պատճառ եղև
շնութեան նորա: Եւ այն մարդն, որ էառ զնա,
շուն կոչի: Եւ այս մարդս թէ այլ կին էառ,
երկուքն շնացողք են: Այդպէս ի չորս դէմն
շնութիւն եղև: Եւ թէ ասէ այն մարդն թէ
«նա հանէ՝ ես առի»:
Ասեմք, թէ կին նորա
է, թէպէտ ի տանէն եհան. զի ոչ հեռաւոր
տեղն և ոչ ժամանակն ոչ կարէ քակտել
զպատկին: Եւ դարձեալ թէ պատճառաւ է հա-
նեալն՝ շնութիւն է քեզ, և թէ անպատճառ,
կին նորա է, և ոչ քեզ»:

Այլ և Յովհանն Մանդակունին ասում է
«Վասն կնաթողաց» թղթին մէջ. «Եւ ոչ ա-
տելութեամբ ինչ հեռանալ հրամայէ, զի ա-
մենայն, ասէ, որ ատէ զեղբայր իւր, մարդաս-
պան է, իսկ որ զկինն իւր ատէ, անձնաս-
պան»⁴:

Արդ՝ բաւական են այսքան վկայութիւննե-
րը: Բոլորն էլ պնդում են մի և նոյն ճշմար-
տութիւնն, ըստ որում և պարզ է Քրիստո-
սի վարդապետածը: Կինը կամ ամուսինն ար-
ձակել արգելւում է. արձակուածը պատկել
ուրիշի հետ՝ անկարելի է, վասն զի այդպիսի
ամուսնութիւնը շնութիւն է: Ուրեմն «այն որ
զհոգի և զմարմին կապեաց ի մի՝ ոչ ոք իշ-
խէ լուծանել, բայց Նա որ կապեացն՝ և

1. Գրչագիր. Բ. № 178, 179.

2. Տպ. Կ. Պալսի. էջ 120, 122.

3. Գրչագիր. № 1328.

1. Գրչագիր. № 1331.

2. Գրչագիր.

3. Տպ. Վենետիկ. էջ 130.

Սա արձակեցէ՛լ և վերադառնա՛ն անկողն իւրեանցէ՛լ: Ա՛յնանորոյ և լա՛ւ խորիք, ոչ պոռնիկք, ոչ կռապարիշտք, ոչ շունք..... զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն.....»²

Ա. ՏԵՐ.ՄԻՔԵԼԵԱՆ.

(Կը շարունակուի).



ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՆԱԿԱՆՔԻ ՔԱՐՈՉ.

ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԳ.

Մտիկ արէք էս օր Զեղ մի քարոզ խօսիմ: Գուք էնպէս կարծում էք, որ քարոզ միայն վարդապետներ կուտան, որպէս թէ Քրիստոսի Աւետարան, Աստուածաշունչ գիրք, մեր նախնի սուրբ Հայրապետաց խրատներ և ճառեր միայն վեղարաւոր վարդապետներուն առանձին շնորհուած է, նորա միայն արտօնութիւն և պաշտօն ունին եկեղեցւոյ բեմէն քարոզ խօսել:

Այ՛, էգպէս չէ, քահանան էլ նոյնչափ իրաւունք ունի ամէն ժամանակ քարոզ խօսել, խրատ տալ իւր գիւղական ու ծխական ժողովուրդին, ամէն տօնի և կիրակի օրերում, քանի որ մեր գիւղական ժողովուրդ այնպէս կը լինի, որ տարիներով վարդապետի երես չեն տեսնար: Վարդապետներ երբեմն ամպի պէս կուգան ու կանցնեն, մի կաթիլ անձրև չեն թափեր մեր ցամաքած երկրին վրայ: Հապա՛ մի պիտի խօսի Զեղ Աստուծոյ բան ու պատուէրներ, Քրիստոսի Աւետարան, Առաքելոց և մարգարէից ընթերցուածներ, որ միշտ կը կարգացունեն եկեղեցւոյ մէջ և գուք միայն լսում էք և ոչինչ չէք հասկանում:

Շիտակ խօսողներով կամուրջ կ'առնուի, մեր քահանաներս էլ մեր կարգացած բան չենք հասկանում: Երբեք ոչ ոք չի կարող երես երբէք տեսած չեմք: Սորա համար Աստուծոյ

բան ջրի ձայնի պէս կը լսուի մեր ականջին. մեր եկեղեցւոյ ականէն բոլորած այն կենդանի ջուրէն կարող չեմք խմել ու զովանալ: Ա՛յնպէս պատճառ ու ծարաւած գորտ կեղնեմք եկեղեցիէն, մեր և գուք, թէ քահանան, թէ ժողովուրդ՝ առհասարակ մի անպատ քարձած ենք, ուր երբէք ջուր չի կայ կամ այնպիսի պինդ ու կորդ անմշակ մի երկիր ելեր է մեր սիրտ, զոր թէ վարել ուզեմք՝ մեր գութանի խօսի չի բանիր, ոչ միայն մեր, այլև նոյն իսկ վարդապետի գաւազանի խօսին ևս դժուարաւ կը վարէ:

Գիտէք գուք, ժողովուրդ, մեր քահանայից գութանի խօսի արդէն անպիտան և գուլ է, որովհետև ոչ դպրոցի շնոցի մէջ մտած են և ոչ էլ կրթութեան կուանով ծեծուած ու մըխուած են, մեր էնպէս խամ երկաթ մնացած ենք, մեր խօսի պողպատով զօղուած չէ: Հապա՛ էնպէս կարող եմք ժողովուրդի կորգացած ու խտացած երկիր վարել:

Այ՛ ժամ ասացէք գուք, ժողովուրդ, այս դատաստան ձեզ կը թողում, յանցանքն ում է, երբ գիւղական քահանաներ տգէտ և անիմաստ են, յանցանք եպիսկոպոսին է, որ կը ձեռնադրէ, թէ էջմիածնայ բարձր Հոգւոր Առնինն է, որ կը թողաւորէ: Զէ՛ ժողովուրդին է, որ կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարիւրաւոր սաորագրութիւններ թափում են խնդրագրին վրայ, վաւերական կնքով էլ գրոջմելով խմբովին դիմում են էջմիածնայ գուր, այսպէս խօսում են:

Է՛ շայիկ, հօգուդ մեռնինք, եկեր ենք քահանայ կուզենք, ահա բերերենք մեր գիւղի ախրագուն, որ քահանայի զաւակ է, մեր գիւղի մէջ ծնած է, մեր իւր մանկութեանէն գիտենք սորա վարքն ու բարք, պարկեշտ է, հեղ ու խոնարհ է, վաղուց ի վեր եկեղեցւոյն կը ծառայէ, դպրութիւն կանէ, պատարագի քահանային սպասաւորում է և այլն, մեզ շատ ու բաւական է:

Հայրիկ գիտնալով որ ամէն օր քահանայի ձեռնադրութեան խնդիր կայ, մի ձեռնադր-